



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 14(434) «09» հունիսի 2021թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
366	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 463-Ն որոշումը.....	.
367	«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման իրականացման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 579-Ն որոշումը.....	.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2021թ.

N 463-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի ապրիլի 13-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՅԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏԵԼՈՒՄԸ  
ԵՎ ԱՐՑԱՅԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՕՒՄՄԵՐ այդ թվում</b>	-	-	-	-
<b>01</b>		<b>040 0</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՑԻՆ ՕՒՄՍՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	500,000.0	-	-
	<b>7</b>		<b>Պետական պարտքի գծով գործառնություններ</b>	-	500,000.0	-	-
		1 041 1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	500,000.0	-	-
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	500,000.0	-	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	500,000.0	-	-
<b>04</b>		<b>040 0</b>	<b>ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	(1,220,000.0)	(690,000.0)	(690,000.0)
	<b>3</b>		<b>Վառելիք և էներգետիկա</b>	-	(1,220,000.0)	(690,000.0)	(690,000.0)
		5	Էլեկտրաէներգիա	-	(1,220,000.0)	(690,000.0)	(690,000.0)
		01	Էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և կապի ծառայությունների սուբսիդավորում	-	(1,220,000.0)	(690,000.0)	(690,000.0)
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	(1,220,000.0)	(690,000.0)	(690,000.0)
<b>10</b>		<b>100 0</b>	<b>ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	-	690,000.0	690,000.0	690,000.0
	<b>7</b>	<b>###</b>	<b>Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)</b>	-	690,000.0	690,000.0	690,000.0
		1 107 1	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	690,000.0	690,000.0	690,000.0
		04	Բնակարան վարձելու կամ ժամանակավոր կացարանով ապահովման նպատակով իրականացվող միջոցառումներ	-	690,000.0	690,000.0	690,000.0
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	690,000.0	690,000.0	690,000.0
<b>11</b>		<b>110 0</b>	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉՂԱՍՎՈՂ ՕՒՄՄԵՐ</b>	-	30,000.0	-	-

	2		Այլ ծախսեր	-	30,000.0	-	-
		1	Այլ ծրագրեր	-	30,000.0	-	-
		04	Հատուկ նպատակների ծախսեր	-	30,000.0	-	-
			ԱՀ կառավարություն	-	30,000.0	-	-

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2021թ.

N 579-Ն

ք. Ստեփանակերտ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՂԵՄ ՍԱՆՁԱԶԵՐՕՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԻԶՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով հաստատված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Կ Ա Ր Գ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ նյութական վնաս կրած անձինք) պետական ֆինանսական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցությունը չի տրամադրվում՝

1) բանկերին, վարկային կազմակերպություններին, գրավատներին, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձանց, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց.

2) գորահավաքային գորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստազորային ֆիզիկական անձանց կամ նրանց ամուսիններին կամ համատեղությամբ բնակվող ծնողներին, բացառությամբ պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված, մահացած, անհայտ բացակայող համարվող կամ հաշմանդամություն ձեռք բերած զավակ ունեցող ծնողների: Զորահավաքային գորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստազորայինների անվանացուցակն Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) է տրամադրվում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից.

3) իրավաբանական անձանց, որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան գումարային 60 տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցները հանդիսանում են սույն կետի 2-րդ ենթակետում նշված անձինք:

3. Նյութական վնաս կրած անձը կամ նրա կողմից լիազորված անձը դիմում է ներկայացնում Կոմիտե դիմումին կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) նյութական վնաս կրած անձի (լիազորված անձի միջոցով դիմումը ներկայացնելու դեպքում՝ նաև լիազորվածի անձնագրի պատճենը և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը), նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների անձնագրերի պատճենները և տեղեկանք՝ ընտանիքի համատեղությամբ բնակվող անդամների (ամուսիններ, ծնողներ, զավակներ) մասին.

2) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձնագրի պատճենը և Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից տեղեկանք՝ գործադիր մարմնի ղեկավար հանդիսանալու մասին, իրավաբանական անձի մասնակիցների (բաժնետերերի) և նրանց ընտանիքների՝ համատեղ բնակվող անդամների անձնագրերի պատճենները (բացառությամբ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց), քաղվածք բաժնետերերի ռեեստրից՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վկայականը կամ քաղվածքը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

3) տեղեկանք՝ գույքի կորստի վերաբերյալ, տրված՝ գույքի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի կողմից, իսկ կորսված գույքը համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվելու դեպքում՝ տրված շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից և (կամ) տվյալ փաստը հաստատող այլ նյութեր (տեսանյութեր, լուսանկարներ, իրավասու պետական մարմինների կողմից կազմված ակտեր)։

4) կորսված կամ վնասված գույքի նկատմամբ սեփականության, իսկ պտղատու այգիների և խաղողայգիների դեպքում՝ նաև վարձակալության, ինչպես նաև ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրավունքը հավաստող փաստաթղթեր։

5) նյութական վնաս կրած անձի բանկային հաշվեհամարը։

6) փաստաթղթեր՝ ըստ Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված Միջոցառման (այսուհետ՝ Միջոցառման) 7-րդ կետով սահմանված ուղղությունների՝

ա. 1-ին ենթակետով սահմանված հասարակական և արտադրական շենք, շինության կադաստրային արժեքի մասին տեղեկանք՝ տրված Գոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության համապատասխան բաժնի կողմից,

բ. 4-րդ ենթակետով սահմանված նյութական ակտիվների վնասի և պետական ֆինանսական աջակցության չափի մասին տեղեկանք՝ տրված Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից,

գ. 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված կաթնատու, մսատու կենդանիների, մեղվաբնուսանիքների, պտղատու այգիների, խաղողայգիների և 3-րդ ենթակետով սահմանված գյուղատնտեսական տեխնիկայի մասով՝ իրենց պատկանող գույքի վերաբերյալ Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկանք՝ կազմված համապատասխան համայնքի ղեկավարի կամ շրջանի վարչակազմի ղեկավարի, շրջանի անասնաբուժական կայանի տնօրենի, գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա։

4. Գոմիտեն նյութական վնաս կրած անձի կողմից ներկայացված փաստաթղթերով, անհրաժեշտության դեպքում իր կողմից հարցման կարգով հավաքագրված փաստաթղթերով ստեղծում է նյութական վնաս կրած անձի անհատական գործ (այսուհետ՝ Գործ)։

5. Գոմիտեն Գործը փոխանցում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցության պետական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)։

6. Հանձնաժողովը Գործը ստանալուն հաջորդող օրվանից երկամսյա ժամկետում՝

1) հաստատում է դիմումատուի համապատասխանությունը Կարգով սահմանված պայմաններին։

2) հաստատում է նյութական վնաս կրած անձի վնասի չափը։

3) նյութական վնաս կրած անձի՝ Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 17-ի N222-Ն որոշմամբ հաստատված ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) շահառու հանդիսանալու և ստացած (ստացման ենթակա) աջակցության չափի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով դիմում է Արցախի ներդրումային հիմնադրամ։

4) հաստատում է պետական ֆինանսական աջակցության չափը։

7. Գոմիտեն Հանձնաժողովի որոշման մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմումատուին։

8. Հանձնաժողովը որոշում է նյութական վնասների և պետական ֆինանսական աջակցության չափերը՝ սույն կետով սահմանված կարգով։

1) Միջոցառման 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հասարակական և արտադրական նշանակության շենք, շինությունների լրիվ կորստի դեպքում՝ վնասը գնահատվում է դրանց կադաստրային արժեքի չափով, մասնակի վնասի դեպքում՝ կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով, իսկ աջակցության չափը՝ գնահատված վնասի և դրանց հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան 100 000 000 ՀՀ դրամը։

2) Միջոցառման 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ութից ոչ ավել, բացառությամբ վարորդի, նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների լրիվ կամ մասնակի կորստի դեպքում՝ վնասը գնահատվում է Արցախի Հանրապետության տարածքում գնահատման գործունեություն իրականացնելու լիազորություն ունեցող անձանց կողմից կազմված գնահատման հաշվետվությամբ (կամ տեղեկանքով)

որոշված արժեքի չափով: Աջակցությունը սահմանվում է միայն մեկ կորսված (վնասված) միավորի համար, դրա հաստատված վնասի և դրա հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան 5 000 000 ՀՀ դրամը:

3) Միջոցառման 7-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ բեռնատար ավտոմեքենայի, ինը և ավելի, բացառությամբ վարորդի, նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենայի, գյուղատնտեսական, շինարարական և հատուկ տեխնիկայի լրիվ կամ մասնակի կորստի դեպքում՝ վնասը գնահատվում է Արցախի Հանրապետության տարածքում գնահատման գործունեություն իրականացնելու լիազորություն ունեցող անձանց կողմից կազմված գնահատման հաշվետվությամբ (կամ տեղեկանքով) որոշված ընդհանուր արժեքի չափով: Աջակցությունը սահմանվում է միայն երեք կորսված (վնասված) միավորի համար, դրանց ընդհանուր վնասի և դրանց հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան 25 000 000 ՀՀ դրամը:

4) Միջոցառման 7-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված նյութական ակտիվների կորստի դեպքում՝ վնասի չափը գնահատվում է կորսված գույքի հաշվեկշռային արժեքի չափով: Աջակցության չափը սահմանվում է վնասի և այդ գույքի հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան 100 000 000 ՀՀ դրամը: Հաշվեկշռային արժեքի վերաբերյալ տեղեկանքը կազմում է Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն՝ հիմք ընդունելով:

ա. տարեկան շահութահարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորություն կրող շահառուների համար՝ 2019 թվականի համար «Ռեզիդենտների շահութահարկի» հաշվարկում արտացոլված նյութական արժեքների վերաբերյալ տվյալները: Օրենքով սահմանված դեպքերում 2020 թվականի համար «Ռեզիդենտների շահութահարկի» հաշվարկի ներկայացումը պարտադիր լինելու դեպքում հաշվի են առնվում նաև պատահական կորուստները՝ փաստաթղթերով հիմնավորված չափերով:

բ. առևտրական գործունեություն (բացառությամբ շրջիկ և շրջածախ առևտրական գործունեության) իրականացրած և (կամ) իրականացնող շահառուների համար՝ «Ըստ գործունեության իրականացման վայրերի ապրանքանյութական արժեքների շարժի վերաբերյալ» հաշվետվությունում արտացոլված ապրանքների մնացորդը (ամսական հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների համար՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ, եռամսյակային կամ կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների համար՝ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ): «Ըստ գործունեության իրականացման վայրերի ապրանքանյութական արժեքների շարժի վերաբերյալ» 2020 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներն ընդգրկող ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվություններում բացասական շեղում արտացոլված լինելու դեպքում հաշվի են առնվում նաև պատահական կորուստները՝ փաստաթղթերով հիմնավորված չափերով:

գ. ընդհանուր հարկման համակարգով (բացառությամբ անշարժ և շարժական գույքի վարձակալության տրամադրման) գործունեություն իրականացրած և (կամ) իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող կամ բացառապես հաստատագրված վճար վճարող հանդիսացող (բացառությամբ առևտրական և ավտոտրանսպորտային գործունեություններ իրականացնող) շահառուների համար՝ «Հարկ վճարողի իրացման շրջանառության վերաբերյալ» հաշվետվությունում արտացոլված 2020 թվականի փաստացի գործունեություն իրականացրած ամիսների միջին ամսական շրջանառության ծավալը, իսկ հաստատագրված վճար վճարող հանդիսացող շահառուների համար՝ նաև 2020 թվականի երկրորդ կիսամյակի համար ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը:

դ. արտոնագրային վճարների հարկման համակարգով գործունեություն (բացառությամբ շրջիկ և շրջածախ առևտրական ու ավտոտրանսպորտային գործունեությունների) իրականացրած և (կամ) իրականացնող շահառուների համար՝ 2020 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներն ընդգրկող ժամանակահատվածի համար տրամադրված արտոնագիրը:

5) Միջոցառման 7-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ կաթնատու և մսատու կենդանիների, մեղվաընտանիքների կորստի դեպքում՝ վնասը հաշվարկվում է սույն ենթակետով սահմանված արժեքների հիման վրա, աջակցությունը՝ ընդհանուր վնասի և սույն ենթակետում նշված կաթնատու և մսատու կենդանիների, մեղվաընտանիքների հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա)



աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան ընդհանուրը՝ 25 000 000 ՀՀ դրամը.

ա. խոշոր եղջերավոր անասուն՝ 300 000 ՀՀ դրամ (մեկ գլուխ).

բ. մանր եղջերավոր անասուն՝ 40 000 ՀՀ դրամ (մեկ գլուխ).

գ. խոզ՝ 60 000 ՀՀ դրամ (մեկ գլուխ).

դ. մեղվաբնտանիք՝ 50 000 ՀՀ դրամ (մեկ մեղվափեթակ).

6) Միջոցառման 7-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ պտղատու այգիների և խաղողայգիների կորստի դեպքում՝ վնասը հաշվարկվում է սույն ենթակետով սահմանված արժեքների հիման վրա, աջակցությունը՝ ընդհանուր վնասի և կորսված կամ վնասված այգիների հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան ընդհանուրը՝ 50 000 000 ՀՀ դրամը.

ա. մինչև 3 տարեկան պտղատու այգի՝ 2 000 000 ՀՀ դրամ (1 հա).

բ. 3 և ավելի տարեկան պտղատու այգի՝ 3 000 000 ՀՀ դրամ (1 հա).

գ. մինչև 3 տարեկան խաղողայգի – 2 500 000 ՀՀ դրամ (1 հա).

դ. 3 և ավելի տարեկան խաղողայգի – 3 500 000 ՀՀ դրամ (1 հա):

9. Նյութական վնաս կրած անձին սեփականության իրավունքով անշարժ գույքի միավոր համարվող գծային ինժեներական ենթակառուցվածքներ պատկանելու դեպքում՝ Կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով գնահատված վնասի չափը նվազեցվում է Կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետում նշված գույքի հաշվեկշռային արժեքի չափով: Նշված գույքի հաշվեկշռային արժեքների վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները ներկայացվում են շահառուի կողմից: Փաստաթղթերի բացակայության դեպքում Կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն որոշված աջակցության գումարի չափը նվազեցվում է Կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով որոշված աջակցության գումարի չափով:

10. Նյութական վնաս կրած անձին սեփականության իրավունքով տրանսպորտային միջոցներ, գյուղատնտեսական, շինարարական և հատուկ տեխնիկա պատկանելու դեպքում Կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով գնահատված վնասի չափը նվազեցվում է Կարգի 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված գույքի հաշվեկշռային արժեքի չափով: Նշված գույքի հաշվեկշռային արժեքների վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները ներկայացվում են շահառուի կողմից: Փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված աջակցությունը նվազեցվում է Կարգի 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված կարգով որոշված աջակցության գումարի չափով:

11. Կոմիտեն, Հանձնաժողովի՝ նյութական վնաս կրած անձանց պետական ֆինանսական աջակցության գումարների վերաբերյալ որոշումների հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝

1) մինչև 5 000 000 ՀՀ դրամ (ներառյալ) պետական ֆինանսական աջակցությունը դրամական օգնության ձևով տրամադրման համար.

2) պետական ֆինանսական աջակցության գումարը 5 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում գերազանցող չափին հավասար անվանական արժեքով գանձապետական հասարակ մուրհակների թողարկման և տրամադրման:

12. Կոմիտեն մինչև 5 000 000 ՀՀ դրամ (ներառյալ) պետական ֆինանսական աջակցության գումարը փոխանցում է նյութական վնաս կրած անձի բանկային հաշվին:

13. Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի իսկության համար պատասխանատվություն է կրում դիմումատուն և (կամ) տեղեկությունը տրամադրած մարմինը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: